



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԱՆ ԲԱՅԱԴՅԱՆ

Արտոնագիր թիվ 2154

Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Նոր-Արեշ 40-րդ փող. 27 տուն
հեռ. (094/091) 41.65.03 էլ. հասցե armbayadyan@gmail.com

«24» մարտի 2018թ.

թիվ-2017/9-007

Քաղվածք

ՀՀ փաստաբանության մասին օրենքի 18-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ կետ՝ «Փաստաբանը իրավունք ունի դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու պահանջով: Նշված մարմիններն ու կազմակերպությունները պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ դրանց պատճենները»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկատվությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տվողին և ստանալու այդ տեղեկատվությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդված, 1-ին մաս, 6-րդ կետ՝ «Պաշտպանը (...)իրավունք ունի տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները»:

Հ Ա Ր Ց ՈՒ Մ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանին

Ք.Վանաձոր՝ Հայքի հրապարակ

Հարգելի պարոն Հակոբյան,

հանդիսանում եմ փաստաբան /արտոնագիր՝ թիվ 2154 տրված 25.10.2016թ./:

Հայտնում եմ, որ իրավաբանական ծառայության մատուցման շրջանակներում, վստահորդիս շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով, խնդրում եմ հանձնարարել համապատասխան մասնագետներին ինձ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը

1. Բուսական առումով ինչ է իրենից ներկայացնում կանեփի բույսը:



2. Նկատի ուեննալով բնակլիմայական պայմանները, բացօթյա պայմաններում, ՀՀ-ում որտեղ՝ ինչպիսի հողում, կարող է աճել կանեփը, կան արոյոք ըստ մարզերի բացառություններ, աճման կամ հասունացման առանձնահատկություններ և որ ժամանակահատվածում է ավարտվում կանեփի՝ վերջնական հասունացումը:

3. Ըստ արտաքին տեսքի կարող են իրարից տարբերվել ՀՀ տարբեր մարզերում աճած կանեփի բույսերը և դրանից ելնելով նաև այդ բույսից պատրաստված մարիխուանա տեսակի թմրամիջոցը, եթե այո, ապա ինչ հատկանիշներով, մասնավորապես կարող են ըստ արտաքին տեսքի միմյանցից տարբերվել օրինակ Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում աճած բույսերը:


4. Ինչպիսի հիմնական և ինչպիսի լրացուցիչ բաղադրատարրեր, կոմպոնենտներ կարող են պարունակել կանեփի ցեղի բույսերը և մարիխուանա տեսակի թմրամիջոցը: Խնդրում եմ թվարկել սպառիչ:

5. ՀՀ-ում կան կանեփի բույսերի կամ մարիխուանայի տեսակներ, որոնք կարող են պարունակել հիմնական կամ լրացուցիչ այլ կոմպոնենտներ կամ բաղադրատարրեր, եթե այո, ապա որոնք են դրանք: Խնդրում եմ թվարկել սպառիչ:

Կանխավ շնորհակալություն, նամակում տեղ գտած ոչ մասնագիտական ձևակերպումների կամ հարցադրումների համար հայցում եմ ներողամտություն:

Աողիր՝ արտոնագրի և վկայականի պատճենը՝ մեկ թերթ:

Հարգանքով,
փաստաբան՝



Արման Բայադյան